



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD  
EREN  
1007  
BUHR

B 1,205,770








# Ա. ՎՐՈՅՔ

(Պատմագրական Կուկոր)



Հայաստանի պետական  
գրադարանի հանձնաւորություն

1908

Բարձր, սովոր և քույլ

Տ. ԽՈՎՈՐԴ

Բանկ բան արդյունակ

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES



Vroyr, A.

A. Vroyr kon. ....

# Ա. ՎՐՈՅՐ

(Կանոնադրական նօմեր)

Հրատարակութիւն  
ՅՈՒՆԻԵԱՆԱԿԱՆ  
ՄԱՄՆԱԿՄԲԻ

1908

Բագու, տպարան «Տրուդ»

Լ. ВРУИРЪ  
Баку, тип. „Трудъ“

*D. S. A.*

*F. R. T. A.*

*12/12*

*1994-12*



W. H. PUGH

1883—1908



LKHU  
EREN  
1007  
01.01.99

Պ. Ա. Վրոյրի թեմական գործունելութեան 25-  
ամեայ յօքելեանի առիրով կազմեած մասնախումբ,  
կարեւոր համարեց հասարակութեան աւելի ընդար-  
ձակ խաւերի հետ ծանօթացնելու նամար յարգելի  
յօքելեարին, դիմել իրեն պ. Վրոյրին եւ խնդրել  
նրանից իր կեանիցից յուշիկներ, որը յօքելեարը,  
թեւ դժկամութեամբ, բայց յանձնեալ եւ կա-  
ժարեց: Մասնախումբս սիրով յանձնում ե այդ  
ի սպազրութեան:

ՅՈՒՆԻԵԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Հետամուտ լինելով հանդերձ մեր քեմական խոշոր գործիչների կենսագրականները հաւաքելու եւ հրատարակելու գործին, երբէք և ոչ մի րոպէ չեմ մտածել ինքնակննազրութիւնս զրել: Յօքնկեաննական մասնախմբի ղիմումը այդ առիթով մի անակնկալ էր ինձ համար, և Թէկ անպատրաստ ալդ բանին, մի քանի հակիրծ տողնրի մէջ աշխատեցի ամփոփել իմ կեանքի և նրա յարակից մի քանի յիշողութիւններ:

Ա. ՎՐՈՑՐ

# Ա.Վ.ՐՈՅՏ

(Կենսագրական հօքեր)



Ետաքրքրւովներին կարող եմ յայտնել, որ ծնւել եմ 1863 թ. մարտի 13-ին—մի ձախորդ ամսի ոչ-բարեյաջող ամսուսրւին,—Սամարիայում, Կ. Պոլսի այդ հայաշատ քաղում ուր երկար չեմ մնացել, եւ հազիւ երկու տարեկան տեղափոխւել ենի Կ. Պոլսի ասիական մասը, Սկիւտարի Խնաժիկ քաղը, ուր ազատ օլում, ուղապաւած բնութեան ամեն տեսակ գեղեցկութիւնների մէջ անցել է իմ մանկութիւնը։ Հազիւ 12 տարեկան ինձ հանում են քաղային վարժարանից եւ ուղարկում Աֆիօն Գարահիսար, Փոքր-ասիական քաղաքը սովորելու, ուր զիեւերօքիկ վարժարան եւ հաստատած նշան էֆէնդի Շիւմանեանը (վերջը Ղեւոնդ եպիսկոպոս, Էրգրումի առաջնորդ.) իր եղբայրներով։ Մի զարհութելի հրդեն, որ լավեց այդ քաղաքի համարեա ամբողջ հայոց քաղը եւ յիւնական վարժարանը, պատճառ դարձաւ որ Կ. Պոլսի վերադառնամ եւ

ուստիմ շարունակեմ Սկիւտարի «նեմարան» յորջորջւող դպրոցում, ուր կրօնուսոյց էր Մատքեռս եպ. Խզմիրլեան: 15 տարեկան էի, որ ծնողացս հիւ Կովկաս տղափոխւեցինք:

Դեռ Կ. Պոլիս եղած ժամանակ, ըստ մանկահասակ, բայց յանախս առիթներ ունեցել էի բատոն յանախել, եւ այդ այն տարինում ուր սովորաբար մանուկները հազիւ են ընկնում նասարակական այդպիսի վայրեր: Սկիւտարի Բաղյար-Բաշիի քատրոնը, որի անուղղրնեօրը Յակոբ Վարդովիեանն էր, միաժամանակ հանդիսանում էր նաեւ բատրոնական զործի արտօնատերը: Բացի նրանից ոչ ո՛վ Կ. Պոլսում իրաւունք չուներ հայերէն կամ բիւրերէն ներկայացումներ տալ կանոնաւոր խմբով: Այդ խմբում փայլում էին այնպիսի ոյժեր՝ որպիսիք էին Դարագաւեան Խոյերը, Աստղիկ. Հրաշեայ, Մնակեան, Պենլեպեան, Թրեանց, Խւսոն նի, եւ ուրիշ ժամանական աստերից, որոնք համախմբւած էին այբտեղ: Խումբը բացի հայերէն եւ բիւրերէն պիեսներից, ներկայացնում էր նաեւ օպերեններ ու բալետներ. որոնց մեջ մասնակցում էին անխսիր բոլոր դերասաններ՝ շնչին բացառութեամբ: Այդ տպաւորութիւնների տակ էր անուշեա, որ մեր տան փոքրիկ պարտկում մի քատրոն շինեցինք ընկերներով. սկսոնք փորձեր անել ներկայացնելու համար հենց առաջին պատահած տպած պիեսը՝ որի անունն էր «Ս. Պողոսի Եկեղեցւոյն զանգականարը»:

\* \* \*

1879 թ. Թիֆլիսում սկսուեց «մետական» կոչւած խմբի կանոնաւոր ներկայացումներ՝ որոնց «մետական» յանախորդն էի: Նախ Ադամեան, Աստղիկ եւ Սիրանոյս հիացնում էին նասարակութեան իրանց խաղով: Թիֆլիսի Յեաս-մոնդե-ը ուղղակի հրապուրած էր այդ հիմնարկութեամբ, եւ նրա բովիչ ազդեցութեան տակ վրացախոս եւ մանաւանդ ուռւսախոս հայ Եղանները նզնում էին հայերէն բորովիլ: Հենց դրանց ազդեցութեան տակ դարձեալ սկսեցին մեր տնային խաղերը. ներկայացումների փորձերը. բայց Թիֆլիսը ունեցել էր արդեկ իր ազդեցութիւնը, փարձում էինք գրել մեր ոյժերի համապա-

տասխան պիեսներ եւ այդ ներկայացնել: Ամեն մի բատերաշօն մեզ նոր հիւրեր էին բերում Կ. Պոլիկ: Գարազաւեան բոյեր, Մնակեան, Հրաշեայ: Նոր անձնաւորութիւններ իրանց տաղանդի ինքնաժիպ արտայայտութիւններով ու ընորհով: Այդ միջոցներին եր, հազիր. 18 տարեկան, մայ նեանաւոր Քիւրենեանի մօս լուսանկարչութիւն սովորելու: Նոյն տան մեջ եր բնակուում եւ ծնենցը: Զր գիտեմ ի՞նչ եր նկատել այդ մարդը իմ մեջ, եւ մի առաւօս դաշտաւ եւ յանկարծ իր բամբ ձայնով բացագանչեց.

— Արա՛մ, եկուր դերասան եղի՛ր:

Մինչ այդ օրը շատ էի սիրել բատրոնք, նոյն խսկ մանուկ հասակից փորձեր էի արել լեմ ելլելու, բայց այդ բոլորը ինձ բուռմ եր մի հանելի ժամանց: Ներքէ, եւ ոչ մի բոպէ չեմ մտածել դերասան դասնալ, բեկ շատ մանրազնին կերպով հետեւել էի եւ նրանց խալքը բնիսարատել: Թիֆլիսի նախկին «ամառային» կոչւսդ բատրոնի նեղ, խելդուկ գալկերայի պատերը իւրաքանչիւր ներկայացման խաղամիջոցին վկայ եւ ականատես էին մեր, մէտական յանախորդներիս այնպիսի՝ տաք եւ բուռն վիճաբանութիւններին: այս կամ այն դերասանի խաղի եւ դերակատարութեան նկատմամբ—որ ստեղ պէտք էր լինում այդ տաք գլուխների աղմուկը չափաւորելու համար հսկիչ ոստիկանի միջամտութեան...:

— Դերասան դասնալ, որոնում էի ես—դուրս գալ եւ ներկայացնել հազարաւոր ամբոխի առաջ, առատ լուսաւորւած դահլիճում, դասնալ իւրաքանչիւրի բննադատութեան առարկայ—երբէ՛ք. այդ իմ գործը չէ՝ վիճեցի ես վերջնականապէս, եւ լուր ու մունչ սկսայ գործիս նայել եւ լւանալ Քիւրենեանի տպած հազարաւոր լուսանկարչական պատկերները:

\* \* \*

1883 բւականից «մօտական» կոչւած խումբը գտաւ իր վախճանը եւ Թիֆլիսի բատրոնական աշխարհը միանգամայն մատնեց մոռացութեան, եւ աւելի ցաւալին այն է, որ

խափանւած փայլուն հայերէն ներկայացումները վերսկսելու  
եւ ոչ մի նորոյ չկար:

Նոյն տարւայ յունիսի սկիզբներին եր, երբ այցելեցի իմ  
մի նոր ծանօթիս, Վերանես Փափազեանին, որի սենեակը  
հաւաքատեղի եր դարձել մի խումբ երիտասարդների, ի թիւս  
ուսոց եւ քատերասէրների, որոնք մատիր եին այդ ամառ մի  
շաբաթ ներկայացումներ կազմակերպել Միքայէլեան փողոցի  
վրայ գտնւող «Առեւտրական կլուբ»-ում:

—Ահա, Արամին ել վերցրեք դիմեց նրանց Փափա-  
զեանը, նա ել կարող է մասնակցել ձեր ներկայացումներին:

Սս սկզբում դժւարացայ ըստ իմ հաւորութեան—  
բայց յետոյ համաձայնեցայ փորձել, եւ իմ իբր քե փորձած  
ընկերներս ինձ յատկացրին է. Տեր-Դրիզորեանի «Մօդա»  
պիեսում 60-ամեայ Դրիզոր ալայի դերը: Մի վառվուն, 20-  
ամեայ անփորձ երիտասարդ, քե ի՞նչ կարող եր լինել այդ 60  
տարեկան ծերունու կամի մեջ՝ այժմ շատ լաւ կարող եմ ինձ  
պատկերացնել:

Այդ ներկայացումների շաբաթ մինչեւ օգոստոս շարու-  
նակւեցին:

Նոյն տարւայ սեպտեմբերին Թիֆլիսում կազմակերպւեց  
դերասանների մի խումբ Գ. Զմէկեանի դեկավորթեամբ, եւ  
ամառային ներկայացումներին մասնակցող դերասանները ինձ  
ել իրանց հետ առաջնորդեցին դէայի նորակազմ խումբը:

Բայց մեր խումբը եւ իր ուշադրութարը շատ հեռու էին այն  
փայլուն խմբից, որի ներկայացումներից երես եր առել քատո-  
նասէր հասարակութիւնը եւ երեխ այդ պատճառով էլ պատ-  
ւում եր մեր տած ներկայացումները... իր բացակայութեամբ:

Հազիւ 1—2 ներկայացում տած էինք, երբ Քօլգարիայից  
Թիֆլիս եկաւ դերասան Թրեանցը (Թուրեան). խսկոյն միացաւ  
մեզ, եւ սկսեցինք փորձել երա նոշակաւոր «Դօն-Դրէզօրիօն»:  
Ինձ վիճակւեց Փիփէրրօյի դերը. դժւարանում էի խաղալ.  
Թրեանց ինքը սկսեց ինձ հետ պարապել այդ դերը պատրաս-  
տելու համար: Խեխան Ամատունին քատրոնումն եր այդ գիշեր.

իր նին բատոնական գործիչ, լսել էր Թրեանցի անունը եւ եկել էր անձամբ զնահատելու: Բայց սրուեալ ժամին վարագոյքը չեր բարձրանում, որովհետեւ ծախւած տոմսակների գումարը բաւական չեր բատոնի վարձը վնարելու: Նւ Ամատունին Ալ. Թահիրեանի հետ միացած լրացրին 30—40 րուբլի պակաս գումարը, եւ վարագոյքը բարձրացաւ:

Մրտալի, անվերջ ծիծաղ էր որով դդրդում էր այդ զիւեր Արձրունու բատոնական դահիլնը. եւ այդ զիւերւայ սակաւարիւ հանդիսականները գոն ու զւարը տուն վերադարձան: Ասում էին, որ հանդէպ այդպիսի մի աննման Դօն-Գրէզօրիոյի, իմ Փիփէրրօն բոլորովին շնուեմացաւ:

Անցաւ 1—2 ներկայացում էլ, եւ դրանցից գոյացած մի փոքրիկ հասոյր պիտի բաժանւէր բնկերների մէջ: Ինձ բաժին էր հանւած մօս երկու րուբլի: Մի գումար՝ որ առաջին անգամ պիտի ստանայի բատոնից: Բայց լսելով ինձ տրւելու փողի մասին, խմբի առաջնակարգ անդամներից մէկը խիստ բարկացաւ, եւ բոլոր ոյժով արոռոք գետնին խփելով բողոքեց մի սկսնակի վարձատելու դէմ: Բոլորը լուել էին. իսկ ինձ մնում եր այդպիսի վիրաւորանից յիշոյ դառնացած հեռանալ խմբից:

\* \* \*

Թուրեանի միջամտութեամբ եւ խնդրանեով, իմ կապրի հետ չկուրեց բոլորովին, եւ երբ նեղն էին բնկնում, Թուրեան միջամտում էր եւ ես խաղում էի... ձրիաբար:

Ցաջորդ տարին «Կարա-Մուրզա» ստորագրութեամբ մի յայտարարութիւն երեւաց «Մշակ» լրագրում, որով կոչ էր անում հայ երգեցադութեան սիրողներին զալ իր մօս մի հառածայն երգեցիկ խումբ կազմելու համար: Իր սիրող, ես առանձին ոււշադրութիւն դարձրի այդ յայտարարութեան, բայց գուցէ եւ անհոգութեան մատնւէր այդ, եթէ մի երեկոյ, վրաց բատոնում, չծանօթանայի պատահմամբ Կարա-Մուրզայի հետ՝ ուր նա օրկէստրն էր կառավարում: Իմ հարցմանս, թէ արդեօք նոյն ինքը, Կարա-Մուրզան չէր իմ խօսակիցս, սրի

յայտարարութիւնները կարդացել էի, Եւ հաստատկան պատահան ստանալուց յետոյ հարցրի իր յայտարարութեան ի՞նչ նետեանք ունենալու մասին:

— Երկու հոգի եկել էին ինձ մօս բացակայութեանս, Եւ այնուհետեւ այլեւս ոչ ոք չէ երեւացել, — պատասխանեց Կարա-Մուրզա դառնացած:

— Կուգամ վաղը երեկոյ Ձեզ մօս Եւ խօսենք այդ մասին, — աւելացրի Ես հրամես տալով:

Յաջորդ օր մեր տեսակցութեան ժամանակ, Ես միանգամայն հրապուրեցայ Կարա-Մուրզայի ծրագրից, որ թեև դժւար, բայց անիրազործելի բան չէր: Յայտնեցի նրան, որ Ես զիեսմէն. Կ. Պոլսի դպրոցներում այն ժամանակ երգւող էատ երգեր—թեև ոչ ժողովրդական:

Այնու հետեւ խօսակցութիւնը դարձաւ դժւարին խնդրի, խումբը կազմակերպելու վրայ, որ Կարա-Մուրզային դրել էր անելանելի դրութեան մեջ:

— Դրա միջոցն էլ կայ. կը խնդրենք Քամոյեանց եկեղեցու խմբայետ Միքայէլ Շահնշամեանցին (այժմ սարկաւագ Պետրութագի եկեղեցում) որ իր խմբով գայ մասնակցի: Միքայէլ վերին աստիճանի երածաւակը է, չի մերժի:

Յաջորդ օր Միքայէլի հետ Կարա-Մուրզայի մօս եկենք Եւ նա սկսել էր արդեն ինձ երգել տալ «Բամբ... որոտան»-ը, «Արքի հայկազունք»-ը, «Ահա հրեսակ»-ը Եւ այլն: Երգերը ձայնագրում էին: Յաջորդ օրերը Միքայէլ իր խումբը բերաւ, բաղկացած 16 հոգուց, դրանց թւումն էր, այն ժամանակ եկեղեցու տիրացու Եւ այժմ երգիչ Ամիրզանեանը, յետոյ միացաւ Վարդիկեանը Եւ Նենիկոլոփեան: Ներսիսեան դպրոցը արգելեց իր սաներին մասնակցել. Խմբի պակասը դարձեալ լրացւեց. տրեց Թիֆլիսում 1885 թ. առաջին համերգը, Եւ հասարակութեան սրտազին ընդունելութեան արժանացաւ: Ներկարդ համերգից յետոյ հիւանդալութեանս պատճենով Ես հնոացայ իմ սիրած գործից:

\* \* \*

Նոյն տարւայ յունիսին եր, որ դերասանունի ս. Զաքէլը ինձ առաջարկեց մի ճանապարհուրդուրիւն կատարել զաւառները: Ես ընդունեցի, եւ որուեցինք Ախալցխայից սկսել դեպի Ալեքսանդրապոլ-Երեւան: Դա իմ առաջին դերասանական ժայերն էին դեպի զաւառները: Մի ծանր եւ արկածալի ճանապարհուրդուրիւն: Միխայլօվո կայարանից մի բնոնակիր ֆուրգօն հասցրեց մեզ մինչև Ախալցխա: Տիկինը տեղաւորւեց իր մի յանձնարարականով քաղաքի Նդիա բահանայի տանը: Ես մնացի միայնակ եւ հիւրանոցի ծանր ծախսերի լուծի տակ ննուած: Խ. վ. Ստեփանեն, իմ նրան արած այցելուրեան միջոցին առաջարկեց բնակւել դպրոցում որ փակւած լինելուն պատճառով դատարկ եր: Նախկին դերասանը իր ուրախութիւնը յայտնելով աւելացրեց.

— Տասնեակ մեծ-փոքր սենեակներ կան այնտեղ, ընթիր, եւ բնակիր ուր որ կուզես:

Միրով ընդունեցի այդ նրաւեր, որ իմ ծախսերը թերեւացրուց: Միւս կողմից ս. Նդիան եր ամեն որ իր սեղանը ինձ առաջարկում:

Կատարեալ «Թոշունիք Երկնայինք» էինք:

Մեծ, շատ մեծ դժուարութիւններով կազմեց բատերասերների խումբը, որովհետեւ այդ միջոցին բաղաքը յուզւած եր երկու կուսակցութիւնների մինչև արիւնիեղութեան հասնող պայքարով: Մի կողմին պատկանողը չեր ուզում միւս կողմին պատկանողին հետ բեմ դուրս զալ:

— Մուկուչին դղան որ խաղայ, ես չեմ խաղայ:

— Խնկօնց մանչն որ կայ, ես չկամ...

Եւ այսպէս անվերջ:

Անհնար եր լինում հասկացնել նրանց, որ մենք ո՞չ «ուզեանց», էինք, ո՞չ «չուզեանց», ինչպէս անւանում էին իրանց այդ կուսակցութիւնները:

Մի շատ հետաքրիր եւ փափուկ դրութիւն եր ստեղծւել ինձ համար, այդ իմ առաջին բայլափոխին. նիւրն էի համար-

ւում Խորեն վարդապետ Ստեփանեին, քանի որ բնակում էի Երան յանձնած դպրոցական շինութեան մէջ, եւ նա պարագուխն էր պայքարող կուսակցութիւններից մէկի. միւս կողմից ամեն օր նաչի էր հրաւիրւած տէր-Եղիայի տանը, ուր հիւր էր Տ. Զաքէլ, եւ հակառակ կուսակցութեան պարագուխններից մէկն էր համարւում, քանի որ վարդապետը հրապարակով, ժողովրդեան ներկայութեանը, տէր-Եղիայից իր զանգակի համար հաւաքած փողերի հաշիւն էր պահանջել: Անօանելի էր դաւնում իմ դրութիւնը: Վարդապետը սովորութիւն ուներ առաւ օօնները երջագայել եկեղեցու բակում, ուր տեղից էր նաեւ իմ նանապարհը. բաւական երկար էր տեսում մեր խօսակցութիւնը եւ առնասարակ բաղաբում բարբուած խոռվութիւնների ուրշն էր կատարուում:

— Ժողովուրդը անբարոյական, ոգէս, բահանաները կաշարակեր, կուապաս. երեւակայեցէք պ. Վ.րոյր, ի՞նչ պիտի սովորի ժօղովուրդը այն բահանայից, որ այս ձեւով է սկսում ժամերգութիւնը՝ «Օրինեալ տէր մեր Յիսուս Քրիստոս ամեն», — կաց ես բու հեր կանիծեմ: «Հայր մեր որ յերկինս ես» — շան որդի, սուրբ եղիցի անուն բու — կաց մի ժամը պրծնեմ...

Եւ այս բոլորը նախկին դերասանը ձեւացնում էր շատ կենդանի և կատարեալ նեսութեամբ:

Դախօ էր նաչի ժամանակը, այստեղ էլ ծերունի տէր-Եղիան էր սկսում իր բուռն գանգատները վարդապետի դէմ, որ վերջանում էր զինու բածակը ձեռքին զիսաբաց անկծի տարափ տեղալով վարդապետի զիսին:

Քաղաքը ամբողջապէս իր ներքին, տնային կոյիներով զբաղած, շատ իշխանութիւն ցոյց տւալ դէպի մեզ ու մեր ներկայացումները. «Ժամանակակից սէր» ու «Սանդուխու»-ը մեր ու այս տարի այսի բնկնող պիկսներն էին:

Հազիւ ձեռք բներինք մեր ներկայացումներից մի նանապարհածախս, եւ ուղիւորւեցանք Ախալքալաք, իսկ այնտեղից Ալեքսանդրապոլ, Կարս, Երեւան, Էջմիածին եւ Իզդիր՝ ուր լսեցինք որ Աղամեան վերադարձել է Ռուսաստանից Բագու և ներկայացումներ է տալիս:

Նատ փորձութիւների ենքարկւեցինք Խզիրում, այդ բայֆայական կոհւների կլասիք հայրենիքում։ Դպրոցը,—որ փակւած էր կառավարութեան կարգադրութեամբ, եւ երեսի իրենց կսկիծը մեղմելու համար, գիւղի տղայից նրա բոլոր ապակիները ջարդ ու փօռւր եին արել—յանձնւած էր երեց-փոխին, նա էլ բանային յանձնել էր իր արարմունքներով յայտնի տեր-Սամուելին, որ ոչ մի կերպ չէր համաձայնուում բանալին մեզ յանձնել։ Երեցփոխը ուղարկում էր հահանային, հահանան երեցփոխին, իսկ դրա պատճառը... պատճառը այն է եղել, որ հահանային պատճենիիս նրան չեմ բարեւել...:

\* \* \*

Դիւլի «Երեւելիները» մեզ առաջնարդեցին զիւլի այն խանք կամ բարլանսարան՝ ուր Տաճկաստանից երբեւեկող խաւարած երդերը զիւրում եին իրանց արջառներով։ Նատ աննախանձելի էր մեր օրեւանք՝ որ բեկու առաստաղով միացած ախոռի հետ, բայց նրանից 2—3 տախտակով միայն բաժանած էր։ Այդտեղ, մեր զիսխի վերեւ եին բառած 2 աքաղաղ իրանց լնտանիքներով։ Արարատան դաշտի յատուկ ձմեռը ծանրացել էր իր բոլոր դամաննութեամբ։ ցուրտ էր։ Խնդրել եինք վառել այդ սենեակի զարդը, մի ժանգուած ու ծակուած թիրեղեայ վառարան, եւ վառւելուն հետ խնդրեցինք հանգցրնել, որպինետեւ ծուխը ամբողջապէս դուրս էր զալիս։ Ստիպւեցանք մեր ունեցած զգեստներում փաթաթւել ու պառկել։ Ես զգեստառուեցայ Սանատրուկ բագաւորի հանդերձներով ու ծիրանիով, իսկ ս. Զաքէլ իր Սանդուխտի մոյզ-կապոյս կտաւ է շապիկով։ Վերարկուններս մեր անկողինն ու վերմակն էր։ Անցաւ մի կերպ այդ «մինչեւ վերջին դատաստան տեւող» դաման զիւրը։

— Այդ ի՞նչ է ձեր կերպարանիք, ս. Զաքէլ, գոչեցի ալպեած։

— Ի՞նչ կայ որ։

— Նայեցէ՛ հայելին։

Հանեց իր կապոցից փոքրիկ հայելին եւ նայեց սարսա-

փած. կապոյս շապիկը ներկը տել էր, եւ կապոյսի էր ներկել տիկնոց ձեռքերն ու երեսը: Իմ Սանատռովկիս զգեստի գոյնը երեւի աւելի ամուր էր. մնացել էի ավելաս:

Ցաջուդ օրը տեսնելով մեր խղճալի դրուքիւնը իր տունը հրաւիրեց մեզ զիւղի սոված սւ աղքատ սւսուխչը՝ Մկրտիչ Զաքարեան (վերշը հահանայ): Չեմ կարս երեւակայել քա ի՞նչ հանոյքով վայելում էր ամբողջ զիւեր ցրտից սառած ոսկորներս աղքատ ուսուցչի վաւարանի անշափ դուրեկան ջերմուքիւնը:

Թատերասէրների հետ միացած, լրագրի համարներով թղթեցինք լուսամուտներն, իսկ տներից բերւած տախտերով ու կապերաներով գինւեց գեղօրացիաներն ու վարազոյրը: Ներկայացումը կայացաւ, եւ մեծ բաւականուքիւն պատճառեց փոքրիկ ինտէկիզինս երիտասարդներին, որոնք ցաւում էին մեր մուտքի սակաւուքեան համար: Իմ նպատակն էր ձեռք բերել նանապարհածախս եւ օր առաջ չմել դեպի Թիֆլիս: Բայց չը յաջողուեց: Մեր ցաւալի դրուքիւնը ուսադրուքեան առաւ նգդիրի գաւառապետի օգնական Տիգրան Շահնարբունեանը, եւ յանձն առաւ դիմել նայ բեսի նակատագրական միջոցին, տօմսակները ծախելուն: Բ. ներկայացման հասարակուքիւնը բաւականաշափ էր, եւ մեր նանապարհածախսը ապահովւած:

Ամրան սկզբում սկսւած մեր նանապարհորդուքիւնը դեկտեմբերին վերջացաւ, եւ մենք ցուրտ ձմռան երբեմն ֆուրգոնով եւ երբեմն էլ սահնակով վերադարձանք Թիֆլիս:

\* \* \*

1886 թ. կազմեց Թիֆլիսում գտնող դերասաններից մի խումբ ընկերական պայմաններով, Աղամեանը Թիֆլիս հրաւիրեց միասին ներկայացնելու իր նոր կատարելագործւած ռեպերտուրը, Համլետ, Օքելլո, Քին, Կորադո, Ռւբիկ Ակոսա: Աղամեանի երեւալով հասարակուքեան թմրած եռանդը բարբառեց: Արձրունու փոքրիկ բատրոնական դահլիճնը չէր բաւականանում տեղաւորելու հասարակուքեան հոսանքը: Մայիս ամսին ներկայացումները վերջացան: Հասարակուքեան

խանդավառութիւնը արտայայտեց աւելի ուժեղ կերպով։ Կազմւեց մի քատրոնական մասնաժողով, որի անդամներն էին Ի. Փիրօնվ, Ալ. Մանրաշեան և Գր. Փրիդոնեան, որոնք յանձն առան տանել առաջիկայ 1886—87 քատերաւորչանը։

Մայիսին վերջացան մեր ներկայացումները եւ Աղամեանի հետ կազմւած մի խումբ սկսաւ ճանապարհորդել Վլադիկավկազից-Մօզդոկ, Պետափորսկ, ուր խումբը ցրւեց. եւ ես Աղամեանի ու Զաբէլի հետ գնացինք Նկատերինօդար, եւ ապս Թէոդոսիա։

Ժամանակին հաւաքւեցինք Թիֆլիս։ Կ. Պօլսից հրաւիրւած էին նաեւ Դոհարիկ եւ Կիւրեղեան, որոնք ստանում էին 300 ր. Աղամեան 400, իսկ մնացեալներիս մեր դեկավարները առաջարկեցին։

— Բոլորիդ ամսական 30-ական բուրբի ոռնիկ, կը համաձայնեկ՝ լաւ, չե՞ն համաձայնի՞ խումբը գոյութիւն չե կարդ ու նենալ։

Խմբի մեջ էին նաեւ Աւալեան, Տէր-Դաւրեան, Աբէլեան... Համաձայնեցինք...

Այդ քատերաւորչանի դէֆիցիտն եր կարծեմ 3000 բուրբի։

\* \* \*

1888 թ. ուղեւորւեցայ Կ. Պօլիս։ Զարմանալի զուգադիպութեամբ նոյն տարին եկաւ նաեւ Աղամեան։ Մաղաքեան, նախկին դերասանը որ վազուց եր հրաժարւած բեմից, յանձնին Աղամեանի մի համեղ պատառ տեսաւ եւ ձեռնարկեց նրա համար խումբ կազմակերպել։ Դերասաններ համարեա չկային։ Եղածը «Օսմանեան» խումբն եր, որ Մնակեանի առաջնօրդուդեամբ բուրքերէն եր խաղում, եւ համաձայն չեր ոչ մի պայմանով բողնելու, որ իր խմբի դերասանները մասնակցեն նաեւ Աղամեանին։

Իբր միակ ծանօթ դերասանը Աղամեանի ռեպերտուրին, ես մի զիւտ էի թէ Մաղաքեանի եւ թէ Աղամեանի համար։ Մի կերպ խումբը հաւաքւեց. սկսեցինք ներկայացումները։ Մեծ եր հետաքրքրութմւնը, եւ քատրոնում խուռն բազմութիւն եր

լինում: Բայց Մաղաքեան շատ էր նեղում դերասանուհու չգոյնութեան պատճառով, եւ նրա զիխաւոր պայմանն այն էր, որ անպատճառ է ժամ ն ա զ ի ն լիներ:

Չը զիտեմ որտեղից լսել էր, որ Սամարիայում—ուր ես բնակում էի—մի ընտանիք կայ աղքատ, որ 6 աղջիկներ ունի: Մեծ եղանակ զարմանես, երբ մի առաւտօս վաղ Մաղաքեան տեսայ Սամարիա մեր տանը: Յայտնեց իր զալու պատճառը. բայց ո՞րտեղից զտնեկինք կամ իմանայինք այդ ընտանիքի ով լինելը եւ ուր բնակւելը: Խորհուրդ ուի դիմել եկեղեցի: Այնուհետ էր հերքապահ բահանան եւ հարցրինք, արդեօք չկ՞ր նանաշում այն աղքատ ընտանիքը՝ որ 6 աղջիկներ ունի: Քահանան հեռվից-հեռու նանաշում էր ինձ, եւ խորհրդաւոր հայեացք ձգելով վրաս, աւելացրեց քէ ինձը նանաշում է այդ ընտանիքը... բայց քէ անյարմար է...

Քահանան կարծել էր քէ խնդիրը ամուսնական է:

—Ո՛չ, տէր հայր, տեսեց նորից Մաղաքեան. ուրիշ գործի համար է: Եւ այդ ընտանիքի հոսքեն սացանք:

Մի մանկահասակ աղջկի դիմաւորեց մեզ, եւ վեր վագելով կանչեց մի 17—18 տարեկան աղջկան, որ մեզ ներս հրաւիրեց: Մաղաքեան ծնողներին հարցրեց, եւ իմացանք որ բոլոր հոյրերն էլ գնում են աշխատելու: Կարծեմ մայր չունեին, իսկ հայրը զալու էր երեկոյեան:

Եկանք կրկին անզամ երեկոյեան եւ հայրը ընդունեց մեզ:

Մեր այցելութիւնը այդ տան մեջ մեծ հետաքրքրութիւն էր առաջ բերել, եւ ինչպէս երեւում էր ընդունելութեան ձեւից, սրաւորով մեզ էին սպասում:

Մաղաքեան, ակնոցը քրին տեղաւորելով սկսեց իր ճառը, նախ բացատրել զանալով բատրոնի նշանակութիւնը, նկարագրելով մի ընորհալի դերասանուհու սպասող փայլուն ապագան, առաւ նիւթական վարձատրութիւնը, հասարակութեան մեջ ունենալիք դիրքը եւայն, եւայլն: Ամենքը խորին լուսւթեան մեջ լսում էին, երբ Մաղաքեան սպառած իր ճառասանական բոլոր պաշարը, վերջացրեց իր ճառը, յայտնելով

որ եկել է իր օրիորդներից մեկին քատրոնում պատճեն առաջարկելու: Բոպեական լուսաբիւնից յետոյ, հայրը մի շատ կտրուկ շետով խօսեց.

— Էֆենդի, մենք աղքատ ենք, մեծ դժւարութիւններով կը նարենք մեր հացը, բայց եւ այնպէս ես դերասան ունի դարձնելու աղջիկ չունեմ... եւ որքան հնար էր կծու հեզնութեամբ բնդգծեց դերասանուհի բառը:

Մաղաքեան մի քանի խղճուկ, քափրփուկ բառերով կրկին շարունակեց, ցոյց տալով որ կեանեում շատ այդ տեսակ մերժումներ է լսել, եւ դարձեալ իր խօսքը առաջ տարել, բայց հայրը անդրդւելի էր. եւ այս անգամ տեսնելով նրա վերին աստիճանի անհանգստութեան նշանները, Մաղաքեան ինքը լուց եւ խօսքը վերջացրեց կիսա-սպառնալիքով.

— Վերջը շատ կրկնական է այդ արդեն ուս կը լինի, որովհետեւ մենք ուրիշը կը գտնենք ձեր աղջկայ փոխարեն:

— Մենք սովոր չենք այդ ճամբաններով ապրուս ճարել, կրկնեց հայրը, որի խօսքերից երեւում էր, որ դերասանուհի լինել, նրա համար հոմանիք էր մի շատ անպատճառ արհեստի ձեռնարկել:

Մեզ հետ դուրս եկաւ հայրը, զամբիւղը ձեռքին, եւ մեծ եղան իմ ապօռութիւնը, երբ այդ ծերունին մօտեցաւ Մաղաքեանին եւ ասաց.

— Էֆենդի, 5 դրաւ հացի փող չե՞՞ կրնար տալ ինձի... Որին ի պատճառակ Մաղաքեան ծանր յանդիմանութիւնների եւ կտամբանների տարափ տեղաց զլխին եւ երկարուդու կայարանը ուղղւելով աւելացրեց.

— Նս ստակ չունիմ ձեզպիսներին տալու...:

\* \* \*

1889-ին ուղևորւեցանք Ադամեանի ու Մաղաքեանի հետ Զմիւնիա, ուր մի քանի դերասաններեւս միացնելով մեզ, մի խումբ կազմակերպւեց եւ այնտեղ Ադամեան վերջին անգամ արտասանեց իր հանճարի ստեղծագործութիւնները:

Վերադարձանք եւ ծանր քիւրիմացութիւնների եւ զրկում-

ների պատճառով, ես միանգամայն հեռացայ Մաղաքեանից, եւ հակառակ ցանկութեանս՝ նաեւ Աղամեանից—որ ի դեպ է ասել—գենուում եր կատարելապէս Մաղաքեանի ճիրաններում, որին շահագործում եր կատարելապէս:

Նոյն թիվ ձեր ամրանն էր, որ Խաս-զիւղում կազմեցի քա-  
սերասկեների մի խումբ, զիխաւորաբար ժողովրդի մատչելի  
մի շարք պիեսներ խաղալու: Խումբը սկսեց «Վարժապետ»-ով  
իր գործը, որ ես ու Յ. Խնդիրեան, միհացած գրել էինք: Մա-  
սուլլի խանդավառ յօդածներով ողջունեց մեր ձեռնարկաւ-  
րինքը: Թաղում սկսեց մի խուլ տարածայնութիւն. մի խումբ  
մարդիկ, լոկ անձնական հաշիվներից դրդւած, չեն կատարում  
որ խմբի անդամներից մեկը մասնակցի ներկայացումներին,  
եւ նրա հեռացումն էին պահանջում: Այդ պահանջը որքան  
տարօրինակ, այնքան էլ զայրացուցի էր: Պիտի հեռացնեինք  
մի բոլորովին անմեղ, եւ խմբում լաւ տեղ բռնող մի նախ-  
կին փորձած քատերասերի: Այս լինի ըուրջը ահազին աղ-  
մուկ բարձրացաւ. բաղում. մինչեւ մատնութիւն էլ եղաւ ոսի-  
կանութեան՝ քե «Առուսասանից եկած» մի աւրդ խռովում է  
քաղի հանգիստը. բայց դեռ խսութիւնների շրջանը չեր եւ  
անհիետեանք անցան այդ բոլորը: Դրեւց մեր ք. ներկայացու-  
մը՝ «Պեպօ-ն», որ փախադրել էի Պօլիի ժողովրդական բար-  
բառի: Այդ պիեսի ներկայացումը հասարակութեան խանդա-  
վառութիւնը ծայրայեղ աստիճանների հասցեց: Նոյն խան-  
դավառ վերաբերմունքը նաև մամուլի կողմից: Պաշտասում  
էինք «Խարաբալան», երբ ես 1890 թ. գարնան ուղեւորւեցայ  
Կովկաս: Այդպիսով էլ գեղեցիկ սկզբնաւորութիւնը մեռաւ  
խապա:

1

1892—93 թ. օր. օր. Վարդիիրեց, Մարի-Հրանոյց եւ Ալիքսանեան դերասանները եկան կ. Պալմայ եւ ես միացա նրանց հետ կազմակերպւեցինք մի խումբ Բագրում գործելու: Զրկանիներով լի եր այդ բաներաշրջանը, եւ ես պարտէերով ծանրաբեռնած հեռացայ Բագրիկ:

1895-ի ամառը մի նանապարհորդութիւն ձեռնարկեցի ղեպի Սղնախ, Լազողալ, Զաքարալա, Նուխի եւ Շամախի: Անշափ եւ բազմատեսակ էին այն խոչնդուները՝ որոնք պատահում էին իմ նանապարհին: Բայց «փորձութեան բաժակ»-ը ինձ համար Շամախումն էր պահւած: Կլուքը, ուր բեմն էր, բաղադրի ջոջ Ալ. Լալայանցը տևել էր բնակութեան համար ինչ որ մի կեօց: Եւ նա առարկելով այնտեղ այդ կնոջ բնակութիւնը՝ չեր համանականում տալ դանիինը: Դիմեցի այդ հրեռուն, որ յայտնեց քէ իր կալմից ոչ մի արգելվ չկայ ներկայացման համար: Բայց չը նայելով դրան, Լալայեանց անդրդեյի էր: Ոչ մի խնդիրք, ոչ մի միջամտութիւն չօգնեց: Եւ ես, տղական բատերասերների հետ երկար խորհրդակցելուց յետոյ, մասնաւոր տան մէջ մի փոքր դահլիճ վարձեցինք խաղալու յեր «Բաղդասար ալբար-»ը ցերեկը, կանանց համար, իսկ երեկոյեան այր մարդկանց համար: Այս միջոցին դիմեցինք, որովհետեւ դահլիճը շատ փոքր էր:

Նոր էր վերջացել ցերեկայ ներկայացումը, երբ ինձ կանչեց նոյն բաղակի բնակիչներից նաջարեանցը: Խսել էր իմ եւ Լալայեանցի մէջ պատահած դէպէր, նրա յարուցած արգելքը, եւ առաջարկեց իւ դահլիճը: Թատերասերների ուրախութեանը չափ չկար: Խսիսկ ապ էս, նաջարեանցի տունը, որ գտնուում էր Լալայեանցի տան հանդեպ, մի փոքրիկ իշխանական ապարանք էր: Խսկ դահլիճն՝ երաշալի, մի կամարով երկու մասի բաժանւած, որ կարծէք բինւած էր յատկապիս ներկայացումների համար:

— Շամախում շա's-շատերը ցանկացել են զոնկ տեսնել նաջարեանցի ոսկեզօծ պատառներով դահլիճը, բայց չեն արժանացել: Նոյն խսկ իր ազգականները—պատմում էին զարմանելով թատերասերները եւ նաջարեանի այս արտակարգ վարմունքն ու տարօրինակ զոհաբերութիւնը բացատրում էին այն հակառակութեամբ եւ ատելութեամբ՝ որ կար նրա եւ Լալայեանցի մէջ:

3—4 ժամից բեմն ու վարագոյքը պատրաստեց եւ նա

ջարեանի պատօգամբից փշող զուռնան, թէ Լալայեանցին եւ թէ ամբողջ Շամախուն յայտարարում էր այդ օրւայ տեղի ունենալիք ներկայացումը:

— Երեւի այս անհնամուրիններն են պատճառը, որ մեր դերասան Աբելեանը եւ ոչ մի ներկայացում չէ տւել իր ծնընդավայրում — մասձեցի ես:

\* \* \*

1895-ին կազմւեց Թիֆլիսում մի դերասանական ընկերակցութիւն, որ սեզոնից յետոյ ձեւնարկեց մի նանսպարհուրդուրիւն Բարում, Եկատերինոդար, Նոր-Նախիջեւան եւ Բագու որ հիմք դարձաւ 1896—97 թ.-ից այնտեղ մի կանոնաւոր խմբի կազմելուն: Հրաւիրւեցան ս. Սիրանոյէ եւ Թուրեան: 8 տարի շարունակւեց այդ խումբը, վերջին տարին դառնալով ընկերակցութիւն, որովհետեւ բատրոնական մասնաժողովի ինւրականը միայնզամայն սպառւել էր, եւ ոչ մի նետք չը բռնելով իբր յիշատակ իր գոյութեան: Այդ 8 տարւայ ըրջաններին միւս գործել եմ Բագրում: 1904-ի գարիւրելի դեպքից յետոյ, զղայնապէս հիւսնդ, արտասահման անցնելիս մայ Օդքսաս, ուր երկու ներկայացում տվի: Շատերը մինչեւ այժմ զարմանում են թէ ինչպէ՞ս զլուխ եկաւ մի բուռն հայութեան մեջ այդ ներկայացումները: Ապա անցայ Սիմֆեռոպոլ, եւ նոյն ամառը Ռոսովում գործելով վերադարձայ Կովկաս: Խոկ 1901—2 թ. ամառները ներկայացումներ եի տալիս Պետիգորսկ, Վլադիկավկազ, Ղուբա, Դերբէնս եւ Ղզլար: Նոյն քրականներին եղել եմ նաև Աստրախան:

Այս 25 տարւայ միջոցին ներկայացումներ տւել եմ հետեւալ բաղադրերում ու զիւլիեռում. Թիֆլիս, Ախալցխա, Ախալցխա, Ալեքսանդրապոլ, Կարս, Երեւան, Վաղարշապատ, Իզդիր, Սարադամիե, Կաղգւան, Արդահան, Բագու, Բարում, Սուրամ, Մանզլիս, Դերբէնս, Ղզլար, Մօղովկ, Պետիգորսկ, Վլադիկավկազ, Եկատերինոդար, Ռոստով-Նախիջեւան, Աստրախան, Ղարաբիլսա, Շամախի, Նուխի, Դիլիջան, Դանջակ, Սղնախ, Լազօդաղ, Զաբարալա, Թէլաւ, Սիմֆեռոպոլ, դէսսա, Կ. Պօլիս եւ Զմիւռնիա:

\* \* \*

Դրուքիւնս վերջացնելուց առաջ, կր ցանկայի մասնակից անել ընթերցողիս այն խորհրդածուքիւններին, որոնք ծագում են իմ մէջ այս 25-ամեայ տրզանը անցնելուց յետոյ:

Ներկայումս հայ բեմը զօնւում է վերին ասինանի անմիտքար դրուքեան մէջ: Ճիշտ է, քատրոնի ներկայ վիճակը երբէք չի կարելի համեմատել այն ժամանակի եւ պայմանների հետ՝ որոնց մէջ ես բեմ դրւս եկայ, բայց անմիտքար եմ անւանում նրա համար, որ այդ 25 տարւայ ընթացքում մայրենի բեմի համար մեծամեծ ջանքեր եւ նիւթական զոհողութիւններ լինելով հանդերձ, չը տիին այն արդիւնքը՝ որը սպասելի էր: Դրա պատճառները երկու եին, որոնց մեկը առ սա է ի ն կարելի է անւանել, իսկ միւսը՝ ն ե ր է ի ն:

Ինչպէս յայտնի է, հայ բեմը սնունդ է առնում հայ ժողովրդից, եւ սնունդ է տալիս նոյն հայ ժողովրդին: Եւ դերասահները իրենց գործունեուքիւնը—բնականաբար—սկսելով քաղաքներում, քաղաքներումն էլ մնացին, իսկ քաղաքների ժողովուրդը զլիսառաբար բատրոնական գործի ասպարեզը դարձած Թիֆլիսում եւ Բագրում, ուստի է հայախոս: Քատրոնի զլիսառոր յանախորդը, հայ ինտելիգենցիան, զլիսառաբար սովորած ուսւաց զիմնազիաներում եւ համալսարաններում, չէ տիրապետում հայ լեզւին այն շավով, որ նրա հոգեկան աւխարհին բաւականուքիւն տայ: Նաև էլ նա խօսում է մի կիսատ-պուատ հայերեն, բայց խորհում, մտածում է Ղարաբաղի, Շամախու կամ Թիֆլիսի բարբառներով եւ կամ աւելի հաւանականը՝ ուսւերեն: Նա ուղղակի չէ կապւած հայ մտաւորականուքեան, հայ գրականուքեան, հայ մտամուլի եւ բատրոնի նետ. նա անմիջական եւ նետագրից բներցողն է Տօլսոյի, Գորկիյի, Անդրեևի, Արցրյասեւի. բայց ոչ երբէք Քուչակի, Ալիքանի, Խարճանեանի կամ մի ուրիշ:

Հենց այդ տեսակետից մի մեծ հարւած էր. 1894 թ. հայ դպրոցների փակումը:

Միւս կողմից մեկ սխալից միւսն եին զլոււում փոքի

ոյժով հայ բեմը կանգուն պահելու ձգտող քատրոնի դեկավար շրջանները: 1879-ին Թիֆլիսում սկսող հայ բեմի նոր շրջանը մի արթակարգ, ըլացուցիչ, մօղային բան ուներ իր մեջ՝ որ գրաւում էր քատրոն ոչ միայն հայախոս հայուն, այլ նաև ոչ հայախոսին: Բայց հայ քատրոնը զուս բուրժուական մի հաստատութիւն էր այդ բւականներին. իրեւ չեմ սփառլում 40 կ.-նոց 80—90 նոզու տեղ միայն ուներ քատրոնի գալլերեան հասարաւութեան աւելի չունեւոր դասակարգի համար: **Փարքամ Սօլոակեցին** իր մօղային շրջազգեստի հետ դեմ շարժեց միաժամանակ եւ քատրոնը, եւ նրա զաղափար՝ աւանդ քողնելով այդ ժողովրդական մասսաներին:

Տարիները յաջորդում էին միմիանց, տասնեւակ հազարներ անհետ տանելով դեսպի անյատակ անդունիք: «Ակումբ»-ի ծրագիրը իբր աւելի ուեալ համարւող միջոց յրացել էր իշխան Անատունին, բայց հազոր ք: հայ մասսաները այդ գիշխանական ակումբից մի զգալի օգուտ ունենային: Քատրոնի դեկավար շրջանները իրենց լիակատար տեր էին համարում իրենց շրջանում հաւաքած փողերի, եւ սիրաբար ել վարւում: **Դերասանները «ճառայուներ»** էին, իսկ ժողովուրդը ոչխարի հօս՝ որ պարտաւոր էր տեսնել միայն այն՝ ինչ որ իրեն ցոյց էին տալիս: Ցաւած սրտով պիտի ասեմ, որ այդ այլանդակ ըմբռնումներից դեռ եւս չե ազատել հայ քատրոնը:

Ռուսական բեմի փայլուն ազդուրիւնների ազդեցութեան տակ, հայ ինտելիգենցիան սկսեց տարօրինակ կերպով պահանջել, որ հայ իրականութիւնը իր միջից ստեղծէ Մօսկուայի գեղարւեսական քատրոնը յիշեցնող ներկայացումներ: Բայց հնարաւո՞ր էր այդ. կա՞ր այն միջավայրը որ կարողանար տալ այդ բաւարարիւնը: Կար մի խումբ, որ բառի խսկական մտքով՝ գլուխ դնելու տեղ չուներ, անապահով ու անօգնական—իսկ նրա հանդեպ ինտելիգենցիան ուներ իր շատ խիս պահանջները հայ քատրոնից եւ դերասաններից, նոյնպէս խստապահանջ էին եւ հայ ժողովրդի միւս խաւերը: Այդայսի պահանջների բաւարարիւն տալու համար շատ իշ է

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04147 0074